ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №---Ա

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ 27/6 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Ս. Կ. Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2023 թվականի մայիսի 22-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոց 27/6 հողամաս հասցեում նախատեսում է կառուցել բազմաբնակարան շենք, որի ջրամատակարարման և ջրահեռացման համար «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Մատակարար) ստացել է տեխնիկական պայմաններ, որով Մատակարարի՝ ջրահեռացման համակարգին միացման կետ է սահմանվել Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցով անցնող կոյուղատարը, ինչի համար անհրաժեշտ է կառուցել պոմպակայան: Դիմող անձը խնդրել է թույլատրել ժամանակավորապես օգտվել միայն ջրամատակարարման ծառայությունից՝ հաշվի առնելով, որ պոմպակայանը նախատեսվում է կառուցել բազմաբնակարան շենքի ստորգետնյա հարկում, ու դա հնարավոր կլինի ապահովել 18 ամիս հետո,

բ) Մատակարարը սույն թվականի սեպտեմբերի 22-ի №ՄՇ/33529 և Դիմող անձը սույն թվականի հոկտեմբերի 3-ի գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի՝ ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման 1-ին կետով սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Երևան քաղաքի Լենինգրադյան փողոց 27/6 հողամաս հասցեի նոր համակարգը, շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, ջրային համակարգին միացվում է ժամանակավոր՝ Կանոնների 11.1-ին կետով սահմանված ընթացակարգով Մատակարարի կողմից տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով:

2) Դիմող անձի կողմից սույն կետի 1-ին ենթակետին համապատասխան ժամանակավոր միացման համար անհրաժեշտ կառուցման աշխատանքների ավարտից հետո Դիմող անձի հետ, Կանոնների 21.1-ին կետով սահմանված ընթացակարգով, կնքվում է Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագիր՝ ժամանակավոր միացման ժամկետի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2023թ.